ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK"S REGION
GYUMRI MEDICAL CENTER
CJSC

Հայաստանի Հանրապետություն
Գյումրի, Գ.Նժդեհի փ., 3/3
էլ/հասցե՝ gyumrimc@gmail.com
Հեռ. - (0312) 3-03-11

Republic of Armenia
Gyumri st.G.Nzhdeh 3/3
E-mail: gyumrimc@gmail.com
Phone: (0312) 3-03-11

N 0588 «03» մայիս 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով «Գյումրու բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված **«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/7»** ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «Լինարե Մեդ» ՍՊԸ-ին (հասցե՝ ՀՀ ք. Երևան, Նանսենի 7/43 բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, հ/հ՝ 163078147242, ՀՎՀՀ՝ 01063047, հեռ.՝ 041551510) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/7»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն, արդյունքում կողմերի միջև 11.03.2024թ կնքվել է **«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/7-2»** ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

2024 թվականի ապրիլի 17-ին ՀՀ պետական վերահսկողության ծառայության թիվ Ե/907-24 գրությամբ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ծանուցվել է «Լինարե Մեդ» ՍՊԸ-ի և «Լինարե» ՍՊ ընկերությունների փոխկապակցվածության մասին, իսկ «Լինարե» ՍՊ ընկերությունը մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2024 թվականի ապրիլի 23-ին «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագրի միակողմանի լուծման մասին: Պաշտոնապես ծանուցվելուց հետո «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն մինչև մայիսի 2-ը ներառյալ չի վճարել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, արձանագրում եմ, որ «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն թույլ է տվել օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված

որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «Լինարե Մեդ» ՍՊԸ-ին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «Լինարե Մեդ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 23.04.2024թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Հարգանքներով՝ «Գյուղոր բժշկական կենտրոն» ՓԲԸ – ի

տնօրեն՝ Ա. Իսահակյան